

10 տարի անց այս ընտանիքը կրկին հնարավորություն է ստացել վերադարձնել իրենց տունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռից հետո

2014թ.-ի հուլիսի 2-ին, տիկին Թունյանի ընտանիքին տանից զրկելուց եւ վտարելուց շուրջ 10 տարի անց, ՄԻԵԴ վճռի հիման վրա այս ընտանիքի դեմ գործի քննությունը վերսկսվելու է սկզբից: Ընտանիքին ներկայացնում են Միդլսեքսի համալսարանում (Լոնդոն) գործող Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կենտրոնի (ՄԻՊԵԿ) փաստաբանները:

Էմմա Թունյանի ընտանիքը 1930ականներից ապրել է Բուզանդի փողոցում գտնվող իրենց պատկանող տանը: 2003թ.-ին նրանք տեղեկացել էին, որ իրենց, ինչպես նաեւ հազարավոր այլ քաղաքացիների պատկանող գույքը պետք է օտարվեր մասնավոր կառուցապատողի՝ “Գլենդել Հիլզ” ընկերության կոմիսիոնի համաձայն կառավարության որոշման, որով նախատեսված էր, որ այս ընտանիքների սեփականագրվումը պետք է տեղի ունենար պետության կարիքների համար: Տկն. Թունյանի ընտանիքը դիմել էր բոլոր դատական աստիճաններին, սակայն՝ ապարդյուն: Նրանց ի վերջո վտարել էին եւ զրկել իրենց տանից եւ հողակտորից՝ առանց որեւէ փոխհատուցման:

Չնայածեւ 2006թ.-ին սահմանադրական դատարանի որոշմամբ հակասահմանադրական էին ճանաչվել քաղաքացիական օրենսգրքի մի շարք դրույթներ, ինչպես եւ կառավարության այն որոշումը, որով այս ընտանիքի գույքը օտարվել էր, այնուամենայնիվ հենց նույն ՄԴ որոշմամբ սահմանափակվել էր տկն. Թունյանի ինչպես եւ հազարավոր այլ ընտանիքների՝ իրենց գործերի վերանայման համար նոր հանգամանքով դատարան դիմելու հնարավորությունը:

2005թ.-ին այս ընտանիքը դիմել էր ՄԻԵԴ, որի 2012թ.-ի վճռով ճանաչվել էր, որ այս ընտանիքի սեփականության պաշտպանության իրավունքը (ՄԻԵԿ արձանագրության 1 հոդված) խախտվել էր, քանի որ նրանց իրենց գույքից զրկելը տեղի չէր ունեցել օրենքի հիման վրա:

2013թ.-ի նոյեմբերին այս ընտանիքը նոր հանգամանքի հիմքով դիմել էր վճռաբեկ դատարան՝ ՄԻԵԴ վճռի հիման վրա: 2014թ. մայիսի 8-ին վճռաբեկ դատարանը բեկանել է սեփականագրվման վերաբերյալ 2005թ.-ի վճիռը եւ գործն ուղարկել նոր քննության:

Տասնամյա պայքարից հետո, գործը վերսկսվում է իր սկզբնականից արդեն այնպիսի իրավիճակում, երբ բոլոր այն իրավական նորմերը, որոնց հիման սեփականագրվումը տեղի էր ունեցել, ճանաչվել են Սահմանադրությանը եւ/կամ ՄԻԵԿ-ին հակասող: Տկն. Թունյանը եւ նրա ընտանիքը, չնայած նախորդ տասնամյակում իրենց կրած զրկանքներին եւ տառապանքին, դեռ շարունակում են իրենց հիմնարար իրավունքների պաշտպանության համար պայքարը՝ ՄԻՊԵԿ օժանդակությամբ:

“Սա մի ցուցանմուշային գործ է, որն արտացոլում է Երեւանի կենտրոնի նախկին բնակիչ հազարավոր ընտանիքների դեմ իրականացված անարդարությունը, որի արդյունքում մարդկանց անիրավ ճանապարհով զրկել են իրենց տներից եւ հողակտորներից: Սա, միաժամանակ, առաջին գործն է, որում սեփականագրվման վերաբերյալ նախկինում կայացված ներպետական դատարանների վճիռները բեկանվել են եւ գործն ուղարկվել է նոր քննության”-նշեց ՄԻՊԵԿ փաստաբաններից Վահե Գրիգորյանը:

Վճռաբեկ դատարանի որոշման մասին տեղեկանալիս, տկն. Թունյանի ամուսինը, պրն. Ս. Սաֆյանն ասաց. “Երեւում է, որ ձեր միջոցով իմ տունը վերադարձվելու է”: